

ԵԼԵՆՈՎԿԱՅԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ելեմովկա. ($62^{\circ}36'10''$ — $40^{\circ}33''$)—Տեղաւորուած է Սեանայ լճի արեւմտահիւսիսային ափին, մի տափարակի վրայ և սքանչելի տեսք ունի: Բնուած է 26 դ. 1530 թ. ս. տարածութիւն: Ունի կանոնաւոր, լայն փողոցներ, զեղեցիկ, քարաշէն տներ և բաւականաչափ խանութներ ու արհեստանոցներ: Գտնուելով Երևանից, ինչպէս և Ղարաքիլիսից (Աղէսանդրապոլի գաւառ) Նոր-Բայազէտ տանող խճուղու վրայ, ունի փոստային կայարան, փոստ և հեռագրատուն: Միկնոյն ժամանակ համանուն գիւղական հասարակութեան կենտրոնը լինելով, ունի գիւղական դատարան և տարրական դպրոց: Այստեղ է բնակուած այս ոստիկանական շրջանի ոստիկանը:

Երկու եկեղեցու հիմնապատեր և երկու գերեզմանատուն, որոնց խաչքարերն ու տապանաքարերն արդէն գործ են ածուած շինութիւնների վրայ՝ ցոյց են տալիս, որ հնումը ևս այստեղ մեծ բնակութիւն է եղել:

Բնակիչները ռուս աղանդաւորներ են՝ մեծ մասամբ սուրբոտնիկ. կան և պրիկուճներ ու ստարավներ: Ընդամենը 220 տուն են, 816 ար. 790 իգ. միասին 1606 հոգի: խանութպանների և արհեստաւորների մեծ մասը այստեղ ժամանակաւորապէս ապրող հայեր են:

Պարապուժ են երկրագործութեամբ, անասնապահութեամբ, բնակարարութեամբ և ձկնորսութեամբ: Ունին 2259 դ. 2030 թ. ս. վարելահող, 1690 դ. 2020 թ. ս. արօտատեղի. 11 դ. 1240 թ. ս. էլ բնուած է ջրով, որից 7 դ. 1340 թ. ս. լճի, 3 դ. 2300 թ. ս. գետակների տակ:

Սիմէօնովկա. ($62^{\circ}33'45''$ — $40^{\circ}39'40''$)—Տեղաւորուած է համանուն բարձրավանդակի (переваль) վրայ, որ ծովի մակերևոյթից 6972 ոտնաչափ բարձրութիւն ունի, մի փոքրիկ զոգաւորութեան վրայ, սառնորակ, բազմաթիւ աղբիւրների մօտ, Ղարաքիլիսից դէպի Նոր-Բայազէտ տանող փոստային ճանապարհի երկու կողքին: Բնուած է 14 դ. 1040 թ. ս. տարածութիւն, որից միայն 2 դ. 1040 թ. ս. ծածկուած է շինութիւններով: Տները մեծ մասամբ փայտաշէն են, կղմինտրով ծածկուած, մի յարկանի. կան և մի քանի երկյարկանիներ: Բնակիչները Տամրովի նահանգի Բերսիխլիպի գաւառի Ուվարովոյ գիւղից 1848 թ. աքսորուած սուրբոտնիկ և մալական ռուս աղանդաւորներ են: Ընդամենը 61 տուն, 257 ար. 239 իգ. ի միասին 496 հոգի: Գրեթէ բոլորն էլ զիտեն հայերէն, որովհետև շրջապատուած են հայերով: Ունին մի պետական միդասեան դպրոց:

Տեղի բարձրութեան պատճառով կլիման շատ ցուրտ է, ուստի և բնակիչները զլիաւորապէս պարապում են անասնապահութեամբ և բեռնակրութեամբ, մասամբ և՛ երկրագործութեամբ։ Իրենց զիւղի սահմանում ցանում են կարտոֆիլ, իսկ Սուխոյ-Ֆ. նտանի մօտ ունեցած հողերում ցորեն և գարբի։ Ունին 250 դ. 1200 ք. ս. վարելահող, 431 դ. 1148 ք. ս. խոտատեղի և 1409 դ. 512 ք. ս. արօտատեղի։

Ալբրասդրովկա, հնումը՝ Զէյնալ-Ըրդին. ($62^{\circ}38'30''$ — $40^{\circ}30'38''$) — Տեղաւորուած է Սևանայ լճի ափին, խճուղու վրայ. բաղկացած է միայն մի փողոցից և բռնում է 3 դ. 800 ք. ս. տարածութիւն, որից միայն 1 դ. 1200 ք. սաժէնն է գտնւում շինութիւնների տակ։

Այժմեան բնակիչները ուս աղանդաւորներ են, մալախան, որ զաղթել են այստեղ 1851 թ. սրանցից առաջ եղել են թուրքեր, իսկ հին ժամանակներում հայեր, որովհետև պատահում են խաչքարեր, հայերէն աղաւղուած արձանագրութիւններով։ Ընդամենը 38 տուն են. 140 ար. 159 իգ. միասին 299 հոգի։ Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ, ձկնորսութեամբ և բեռնակրութեամբ։ Ունին 107 դ. 1200 ք. ս. վարելահող, 986 դ. 592 ք. ս. արօտատեղի։

Զըրլըր, հնումը՝ Վարսեր. ($62^{\circ}34'20''$ — $40^{\circ}33'20''$). Տեղաւորուած է Զանգի գետի ափերին, ուր գետը գեղեցիկ ջրնկէցներ կազմելով դարձնում է չորս ջրաղաց։ Այս ջրնկէցներից է՝ «Ջըրլըր»՝ գիւղը ստացել է իւր անունը։ Բռնում է 30 դ. 1276 ք. ս. տարածութիւն, որից 28 դ. 1920 ք. ս. ծածկուած է շինութիւններով։

Զըրլըրում կայ մի հասարակ եկեղեցի և մի մատուռ։ Բնակիչները զաղթել են Հին-Բայազէտից, Մշից և Խոյից, բոլորն էլ հայեր 112 տուն. 654 ար. 597 իգ. միասին՝ 1251 հոգի։

Զըրլըրից հազիւ 2 կիլոմետր հեռու, նոյն հովտում գտնւում է Շահրեզ գիւղը. ($63^{\circ}33'10''$ — $40^{\circ}33'50''$), ուր կան մի աւեր և մի հասարակ եկեղեցի։ Բնակիչները հայեր են, զաղթած 1829 թ. Մակուայ Անձուկ գիւղից։ Ընդամենը 180 տուն. 896 ար. 672 իգ. միասին 1568 հոգի։

Թէ Զըրլըր և Թէ այս գիւղի բնակիչները պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ։ Երկու գիւղը միասին ունին 1903 դ. 674 ք. ս. վարելահող, 2 դ. 1840 ք. ս. խոտատեղի և 994 դ. արօտատեղի։

Դըղմաշէն (Тотмашень կամ Тутмашень). ($62^{\circ}32'20''$ — $40^{\circ}34'20''$). Երբեմնապէս կոչւում է նաև Վարսեշէշ։ Տեղաւոր-

բուլաժ է Ալափափախ սարի ստորոտում, Հրազդանի ափին 23 դ. 1470 թ. ս. տարածութեան վրայ, որից 21 դ. 1440 թ. ս. բռնում են շինութիւնները: Ունի մի եկեղեցի ս. Թադէոս առաքեալի անուանով և երեք մատուռներ: Ծերունիների ասեւրով գիւղը Դըդմաշէն է կոչուել այն պատճառով, որ այստեղ մի ժամանակ շատ լաւ դղում են մշակել:

Բնակիչները հայեր են 1830 թ. Նոյի և Մակուի գիւղերից գաղթած: Ընդամենը 295 տուն են. 1192 իգ. 1072 իգ. միասին 2264 հոգի: Պարագում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1549 դ. 1170 թ. ս. վարելահող, 681 դ. 1560 թ. ս. արօտատեղի:

Ծաղկունք. (62°32'30"—40°34'50"). — Թուրքերը կոչում են Զիլակի, որ նոյն բառի թարգմանութիւնն է. այսպէս է կոչւում այն բաղամթիւ և բաղմազան ծաղիկների շնորհիւ, որ առատութեամբ բուսնում են այստեղ և այս գաւառակում, որ նոյնպէս Ծաղկունք կամ Ծաղկածոր է կոչւում: Տարածւում է Զանգու գետի աջ կողմը, գեղեցիկ հարթութեան վրայ և բռնում է 21 դ. 220 թ. ս. տարածութիւն, որից 29 դ. 1540 թ. ս. գտնւում է շինութիւնների տակ: Գիւղում ուշադրութեան արժանի ոչինչ չկայ, նոյն իսկ եկեղեցին շատ հասարակ է: Այստեղ է գտնւում այս գիւղական հասարակութեան դատարանը: Բնակիչները հայեր են, Մակուից գաղթած, մի մասն էլ եկել է Ղազարի գաւառի գիւղերից: Այստեղից է եղել Սարգիս արքեպիսկոպոս Զալալեանը: Բնակիչների թիւն է 202 տուն, 996 ար. 828 իգ. ի միասին 1824 հոգի: Պարագում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1075 դ. 920 թ. ս. վարելահող, 167 դ. 600 թ. ս. խոտատեղի, և 1572 դ. 510 թ. ս. արօտատեղի:

Զիլակիս, հնումը՝ Ճապոտիկ. (62° 37' 28"—40° 38' 10"). — Տեղաւորուած է Սեանայ լճի հիւսիս-արեւմտեան ափին, չրջապատուած Բարաթու, Շաղլի-տաշ և Մարալիջա լեռներով: Շատ գեղեցիկ տեսարաններ ունի: Բռնում է 23 դ. 330 թ. ս. տարածութիւն, զբեթէ ամբողջովին ծածկուած շինութիւններով: Գիւղի միջով անցնում է Ղարաքիլիսայից (Աղէքսանդրապոլի գ.) Նոր-Բայազէտ տանող փոստային ճանապարհը: Գիւղում կան մի քանի աննշան աւերակ մատուռներ և մի հասարակ եկեղեցի: Ուշագրաւ է միայն Աստուածընկալ մատուռը գիւղի արեւմտեան կողմում, Բալըղ-չայ գետակի ափին և այն հշ թէ իւր շինութեամբ, այլ ախ աւանդութեամբ, որ այդտեղը շինուեցնել է Աստուծոն՝ Գոշ Մխիթարի հետ խօսելու *):

*) Սեանայ Յայսմաուրք՝ արտադրուած Սմբատեանի Գեղար-

Ձիւրուխուի բնակիչները հայեր են, Հին-Բայազէտի Արծաի գիւղից դադթած 1830-ին: Սրանց բարբառը փոքր ինչ տարբերւում է Նոր-Բայազէտցիների բարբառից: Ընդամենը 212 տուն են: 1038 ար. 967 իգ. միասին 2005 հոգի: Պարագում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և ձկնորսութեամբ: Ունին 1077 դ. 614 ք. ս. վարելահող, 151 դ. 1156 ք. ս. խոտատեղի, 1549 դ. 256 ք. ս. արօտատեղի: 40 դ. 566 ք. ս. տարածութիւն էլ ծածկուած է ջրով, որից 21 դ. 1616 ք. ս. ջրանցքների և 18 դ. 1350 ք. ս. վտակի և աղբիւրների տակ:

Պ. Տ. Աթրիկեանի նպատակով գիւղում պահւում է մի եկեղեցական-ծխական միջառան դպրոց:

Ձուրուխուից դէպի հիւսիս, Սեանայ լճի ափին գտնւում է Թառատափ գիւղատեղին, որի առջև տարածուած ընդարձակ տափարակը կոչւում է Մեծ-Տափ: Կիսաւեր գրութեամբ մնում է եկեղեցին, շրջապատուած խաչքարերով, առանց մի որևէ արձանագրութեան: Պատմութիւնից յայտնի է, որ Աշոտ Թաղաւորը ուրիշ գիւղերի հետ այս էլ նուիրել է Սեանայ կղզուն:

Օրդակլու, հնումը՝ Պորտակ. ($62^{\circ} 35' 50''$ — $40^{\circ} 30' 55''$).—Տարածւում է Սեանայ լճի արևմտահիւսիսային ափին, մի հարթութեան վրայ և բռնում է 26 դեսեապին 480 ք. ս. տարածութիւն: Պորտակը նշանաւոր է նախ և առաջ նրանով, որ այստեղ, լճի ափին գտնւում է 9 տողից բաղկացած մի արձանագրութիւն, որի մէջ պատմւում է որ Արգիշտին նուաճել է Կիսկունի երկիրը և Իշտիկունի քաղաքը: Այս վերջինը հաւանական է, որ լինի այն ամրոցը, որի պարսպի հետքերը դեռ ևս մնում են Պորտակի հարաւային կողմը, լճի ափին բարձրացող բլուրների վրայ: Այս ամրոցի մէջ նկատուի են նաև մի եկեղեցու և մի ձիթհանքի հիմնապատեր:

Օրդակլուում կայ չորս հին եկեղեցիներ, որոնցից մինը գիւղի կենտրոնում գտնուելով, այժմ վերանորոգուելով իբր ծխական եկեղեցի է ծառայում: Միւս երեքը կիսաւեր լինելով, ուխտատեղիներ են համարւում: Մի գօրաւոր ուխտատեղի էլ համարւում է նաև սեպածե արձանագրութեան հարաւային կողմը, լճի ափին գտնուող մատուռը, ուր կան մի քանի խաչքարեր առանց արձանագրութեան: Մատուռի շուրջը ևս կան գետնափոր, բոլորածե շինութեան հիմնապատեր: Հաւանական է, որ այստեղ հրնումը մեհեան եղած լինի: Այժմ այս մատուռը, որ փայտով ծածկուած է, կոչւում է ս. Գէորգ: Աւելի ուշագրաւ է գիւղի հա-

ջուներում, երես 380—387: Ժողովրդի մէջ այս աւանդութիւնը չկայ:

բաւային կողմում, «Կարմիր վանք» կոչուած կիսաւեր եկեղեցու մօտ բարձրացող քարաժայռը, որ այժմ «Թուխ-մանուկ» է կոչուում: Ամենայն հաւանականութեամբ սա Ֆալլիւսի պաշտաման տեղի է եղել ¹⁾: Օրդակլուի շրջակայքում կան բազմաթիւ հրաբլիւային քարակոյտեր:

Գիւղը ունի միջանի լայն փողոցներ, մի և երկյարկանի զեղեցիկ տներ, մի քանի խանութ:

Այժմեան բնակիչները հայեր են: 1830 թ. Մակուի Բաղըր-կեան գիւղից գաղթած, ուր վերաբնակուած են եղել Հին Բայաղէտից: Պէտք է ասել նաև, որ գաղթելիս մի առժամանակ հաստատուել են Մաքրավանքում, և յետոյ միայն տեղափոխուել այստեղ: Ընդամէնը 210 տուն են. 1112 ար. 1062 իգ. միասին 2174 հոգի: Ունին եկեղեցական-ժխական միդասեան դպրոց: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և ձկնորսութեամբ: Ունին 1371 դ. 1320 ժ. ս. վարելահող և 1532 դ. 1220 ժ. ս. արօտատեղի:

Ցածարբերդ.—Գտնւում է Սեանայ վանքի հանդէպ, դէպի արևմուտք: Այստեղ մի փոքրիկ հրուանդան ձգւում է լճի մէջ. երբեմն այստեղ մի բերդ է եղել, որի պատհասող և գիւղը այժմ կոչւում է Ցածարբերդ: Այստեղ կայ սրբատաշ քարից շինուած մի կիսաւեր մատուռ, Գոշ Մխիթարի անունով: Սրա մէջ կայ մի խաչքար, որի մասին աւանդաբար պատմւում է, թէ կանգնեցրած է ի յիշատակ այն շարուքեան համայրին, որ տուեց Մխիթար Գոշը Երուսաղէմից վերադառնալիս իրեն ընդառաջ եկած Գետկայ վանքի միաբաններին (1200 թ.):

Մատուռից փոքրինչ ներքև գտնւում է «Երսի տունը»—Սեանայ վանքի հիւրատունը, շտեմարանը և ընդարձակ գոմը:

Հրուանդանին կից գտնւում է գիւղը, որի խարխուլ եկեղեցին այժմ վերաշինւում են: Բնակիչները բոլորն էլ հայեր են, Հին-Բայաղէտի Աւաղուղ գիւղից գաղթած, ընդամէնը 62 տուն են, 264 ար. 252 իգ. միասին 516 հոգի: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և ձկնորսութեամբ: Շատ գովուած է այստեղի իշխան ձուկը լճի միւս կողմերի նոյն ձկների համեմատութեամբ: Գիւղն ունի 776 դեսիատին պիտանի հող, որ ամբողջովին պատկանում է Սեանայ վանքին: Պատմութիւնից յայտնի է, որ Աշոտ Ա. Թաղաւորն է նուիրել այս գիւղը վանքին:

Գոմածոր. Տեղաւորուած է Արջանոց լեռան (7846) ստորոտում, մի ձորակի մէջ, ուր երբեմն գտնուել են Սեանայ վանքի անա-

¹⁾ Տես նախապատմական տեսութեան մէջ «Ֆալլիւս» գլուխը:

սունների գոմերը, որից և ստացել է այս գիւղը իւր անունը: Գառականում է Սեանայ վանքին: Ուշագրութեան արժանի ոչինչ չկայ գիւղում. լեռան վերայ կայ մի ուխտատեղի ս. Խաչ անուանով: Բնակիչները հայեր են, Մակուի Զանգեզոր և Տանալուա գիւղերից զաղթած 1830 թ. Ընդամենը 82 տուն, 308 ար. 267 իգ. միասին՝ 575 հոգի: Գարապունքը նոյնն է: Հողը դեռ ևս կանոնաւոր կերպով չափուած և ցուցակագրուած չէ. համարում է ընդամենը 1018 դեփատին:

Գ. ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԳԱԼԻ-ՂԱՐԴԱՇԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ղըշլաղ. (62°49'40"—40°21'5").— Գտնւում է Նոր-Բայազէտից դէպի արեւելք, հազիւ 3 կիլոմետր հեռու և բռնում է 20 դես. 1500 ք. ս. տարածութիւն: Երեք կողմից պատած է փոքրիկ բարձրութիւններով, իսկ արեւմտեան կողմում տարածւում է մի դաշտավայր, որի միջով ոլորապտոյտ հոսում է Գաւառագետը, մի հիւսնայի տեսարան ընծայելով գիւղին: Արեւմտեան բարձրութեան վրայ նկատելի են մի հինաւուրց ամրոցի հետքեր, որի մասին ոչ մի աւանդութիւն կամ յիշատակութիւն չկայ. տեղացիները Քարաբերդ են կոչում նրան: Այստեղ, ժայռի կրճէին կայ մի արձանագրութիւն, սակայն բոլորովին եղծուած է: Շատ նշանաւոր է գետի ձախ ափին, հին կամրջի մօտ կանգնած խաչքարերից մինի արձանագրութիւնը, որից երևում է, որ այս տեղում հնումը եղել է Երծրաբար գիւղը: Ահա այդ արձանագրութիւնը.

Կամաւն Աստուծոյ ես Տիլիջան որդի տէր Մաթէոսին՝ Թուն Ովանէսին, և որդիքս իմ Աբրիհամն, Լուսմաքոսն և հանգուցեալ որդիքս իմ Սարգիսն և Փիւհամզէն, և կողակիցն իմ Սիրմայ խաթուն, մեք եկինք Գաւառէն, շինեցինք Արծիւաքարս, կապեցինք կարմունջս, կանգնեցինք խաչս. թվ. ՋՂԳ (=1544):

Ով առիւծ մահ առեր զու գիս

Գերեալ եղեր ներքոյ վիմիս,

Զարչարեցայ ես Գաւառիս,

Փող մին չունիմ, պահեմ առ իս: